

**«ԼՂՀ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ
ԱՐԴԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ»**

միջազգային երիտասարդական գիտաժողով
15-18 սեպտեմբերի 2016թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

**«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР
(АРЦАХА):
ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»**

международная молодёжная конференция
15-18 сентября 2016г.
Арцах (НКР), г.Степанакерт

СБОРНИК МАТЕРИАЛОВ

ԱԵԳՄՄ-ՕՄՍԱ
ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ
2016

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց
համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета
Университета Месроп Маштоу э.Степанакерта

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400
L 657

Խմբագրական խորհուրդ

ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Սանասյան**, ի.գ.դ., պրոֆ. **Յ.Մ.Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդե**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մ.Մ.Սարգսյան**, ք.գ.դ. **Ս.Ս.Մինասյան**, տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Բաղդասարյան**, ք.գ.թ., դոց. **Խ.Ս.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Հայրիյան**, ի.գ.թ. **Ա.Յ.Հարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Սանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

Редакционная коллегия

դ.յ.ն., պրոֆ., акад. НАН РА **Գ.Ս.Կազինյան** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **Ա.Ս.Մանասյան**, д.п.н., проф. **Գ.Մ.Ավանեսյան**, д.и.н., проф. **Վ.Ր.Բալայան**, д.ю.н. **Վ.Վ.Գրուզդев**, д.ю.н., проф. **Ա.Գ.Խաչատրյան**, д.п.н., проф. **Մ.Մ.Մարգարյան**, д.п.н. **Ս.Մ.Մինասյան**, д.э.н., проф. **Մ.Մ.Սարգսյան**, к.и.н., доц. **Ն.Յ.Բաղդասарյան**, к.п.н., доц. **Մ.Ս.Գալստյան**, к.э.н., доц. **Մ.Ր.Հայրиян**, к.ю.н. **Ա.Գ.Արутյոнян**, к.ю.н., доц. **Ա.Ա.Մանասյан**, к.ю.н., доц. **Ս.Գ.Պետикян**

L 657 «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածուում ներառված են «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերը:

В сборнике включены материалы международной молодежной научной конференции «25-летие государственности НКР (Арцах): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և
մասնագետների միավորում, 2016

ԼԵՈՒԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՅՈՒ ԵԱՅԿ ԲՈՒՂԱՊԵՇՏՅԱՆ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎՈՒՄ

Մարիամ ԾԱՏՐՅԱՆ

*Խաչատուր Աբովյանի անվան ՀԳՄՀ
Պատմության և իրավագիտության ֆակուլտետ,
Հայոց պատմության ամբիոնի մագիստրանտ
tsatryan_93@mail.ru
Գիտական ղեկավար՝ պ.գ.թ., դոցենտ Է. Գևորգյան*

Անցյալի ուսումնասիրությունը չի կարող արդյունավետ լինել, եթե չի անդրադառնում մեր ներկային ու ապագային: ՀՀ արտաքին քաղաքականության և ներքաղաքական կյանքում կատալիզատորի դեր կատարող դարաբաղյան հիմնահարցի խաղաղ, բանակցային ճանապարհով լուծելու ուղղությամբ գործնական քայլեր են կատարվել Շարժումից ի վեր: ԽՍՀՄ-ի իրավական լուծարումն էապես փոխակերպեց հակամարտության արտաքին քաղաքական միջավայրը, հնարավորություններ ստեղծվեցին միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև առանձին պետությունների կողմից՝ միջնորդական նախաձեռնություններով հանդես գալու համար: 1991-1994թթ. հաղթական պատերազմից հետո կնքվեց զինադադար, որից հետո խնդիրը տեղափոխվեց դիվանագիտական հարթություն: Չեկույցում անդրադարձ ենք կատարել ԵԱՀԿ բուդապեշտյան գագաթնաժողովի շրջանակներում դարաբաղյան հարցի քննարկմանը և կարևոր ձեռքբերմանը, որը, մեր կարծիքով, բեկում մտցրեց դիվանագիտական ճակատում:

1991-1994թթ. հաղթական պատերազմի ավարտից հետո ռազմաճակատի արդյունքների ամրագրումն ու պահպանումը անհնար էր պատկերացնել առանց դիվանագիտական նախապատրաստության և համապատասխան աշխատանքի: Պատերազմը միայն ռազմաճակատում ընթացող գործողությունները չեն: Իր նշանակությամբ մի ռազմաճակատ է նաև արտաքին հարաբերությունները: Պիտի փաստենք, որ այդ հարթակում ստեղծվեց մի այնպիսի վիճակ, որ միջազգային ասոյանների փաստաթղթերում չեղան այնպիսի ձևակերպումներ, որոնք Հայաստանի նկատմամբ սանկցիաների հիմք կարող էին հանդիսանալ¹: Ըստ Էության սա կարևոր հիմք էր նաև ԼՂ-ը ոչ թե որպես հակամարտության օբյեկտ, այլև հակամարտության սուբյեկտ արձանագրելու համար: Եվ այսպես, նկատում ենք, որ զինադադարի հաստատումից հետո ԵԱՀԿ-ի գործունեությունը դարա-

¹ Մասնավորապես, 1993թ. ՄԱԿ-ի 822, 853, 874 բանաձևերում արձանագրվեց, որ ԼՂ-ում պատերազմն ընթանում էր Ադրբեջանի և «տեղական հայկական ուժերի»՝ այսինքն դարաբաղյան ուժերի միջև: Սա նշանակում է, որ բացառվում էր Հայաստանի ազդեսոր համարելու մեղադրանքը:

բաղյան հակամարտության հանգուցալուծման ուղղությամբ նկատելի ակտիվացավ:

Բուդապեշտում 1994 թվականի դեկտեմբերի 5-6-ը կայացավ ԵԱՀԽ անդամ-պետությունների գագաթնաժողովը, որին մասնակցում էին 53 պետությունների ղեկավարներ: Անվտանգության, կազմակերպչական, մարդու իրավունքների և այլ հարցերի շարքում քննարկվեց նաև «Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանն ուղղված ԵԱՀԽ-ի գործունեության ակտիվացում» անվանմամբ փաստաթուղթը¹:

Բուդապեշտի գագաթնաժողովի փաստաթուղթն օրինակելի է իր բովանդակությամբ և պարունակվող դրույթների տեսանկյունից: Մասնավորապես նախատեսվում էր անհրաժեշտ պայմանները՝ վերջնական ու համապարփակ հիմնախնդրի կարգավորում բոլոր կողմերի մասնակցությամբ, միջնորդների ջանքերի համադրում: Ռուսաստանը լիովին բավարարված էր միջազգային հակրության գնահատականից, որն ընդունեց զինադադարի հաստատման գործում նրա բացառիկ դերակատարությունը, ինչն իր դրական ազդեցությունն ունեցավ հետագա բանակցությունների վրա: Եվս մեկ անգամ ամրագրվեց Լեռնային Ղարաբաղի՝ որպես հակամարտության երրորդ կողմի առկայությունը, ինչի հետ համաձայնվեց աշխարհի 52 երկիր²:

ՀՀ այն ժամանակվա փոխարտգործնախարար Վարդան Օսկանյանը տարիներ հետո հիշում է. «Երևան վերադառնալիս մի տեսակ ինքնաբավարարման զգացում կար, որ փոքր Հայաստանը կարողացավ պաշտպանել իր շահերը՝ տուրք չտալով մեծ տերությունների ճնշումներին: Մենք ոչ միայն կանխել էինք ԵԱՀԿ-ի կենսունակության հիմնարար գործունեության մեկի վերացումը, այլև Լեռնային Ղարաբաղի հարցում մեզ համար ստացել էինք բավական նպաստավոր որոշումներ»³:

Այնտեղ էր, որ փորձ արվեց փոխել կազմակերպության որոշումների կայացման հիմնարար սկզբունքներից մեկը՝ կոնսենսուսի սկզբունքը՝ թույլ տալու որոշումները կայացնել «կոնսենսուս միևուս մեկ» ձևաչափով: Սա բոլորին վերաբերելով հանդերձ՝ Էական նշանակություն ունեցավ մեզ համար: Լեռնային Ղարաբաղի հարցում երկու կարևոր որոշում կայացվեց՝ ԵԱՀԿ շրջանակում ստեղծել Մինսկի խմբի համանախագահություն, որը բանակցություններ կվարի կողմերի միջև: ԵԱՀԿ-ն՝ որպես կազմակերպություն, առաջին անգամ պատրաստակամություն հայտնեց անհրաժեշտության դեպքում ԼՂ հարցում խաղաղապահ առաքելություն իրականացնել, որի համար և ստեղծվեց Բարձր մակարդակի ծրագրման խումբը, որը և կնախապատրաստեր այդ առաքելության հնարավոր իրականացումը:

Սա շատ կարոր որոշում էր ոչ միայն Լեռնային Ղարաբաղի, այլև Հայաստանի և Ադրբեջանի համար, քանի որ հնարավորություն տվեց կոնֆլիկտի բոլոր երեք կողմերին, ինչպես նաև միջազգային հանրությանը

¹ Հայաստանի Հանրապետություն, 7, 8 դեկտեմբեր, 1994:

² Տես՝ Առավոտ. հարցազրույց Վ. Կազիմիրովի հետ, 30.04.2002:

³ www.mediamax.am, Բուդապեշտ. փոքր երկրի մեծ քայլը, 13.02.2016:

ավելի լիարժեք և բազմակողմանի պատկերացնել կոնֆլիկտի իրավիճակը, հասկանալ նրա էությունը: Դա հայկական կողմին նաև ճկունության մեծ հնարավորություն էր ընձեռում: Եվ, վերջապես, դա, ըստ էության, բացառում էր ինքնորոշման խնդիրը տարածքային վեճի վերածելու և այդ հիմքի վրա հակամարտության կարգավորման որևէ տարբերակ, ինչին ինքնամոռաց ձգտում էր Ադրբեջանը: Հակամարտության կողմի այդ մանդատը ձեռք է բերվել հայկական դիվանագիտության համառ և հետևողական աշխատանքի շնորհիվ. հաղթահարվել է ոչ միայն Ադրբեջանի համառ դիմադրությունը, այլև միջազգային հանրության հասկանալի չկամությունը, քանի որ վերջինիս համար տարածքային ամբողջականության հիման վրա որևէ հակամարտության կարգավորումն ավելի հեշտ էր:

Մարիամ Ծատրյան

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԸ ԵՎՎ ԲՈՒՂԱՊԵՇՏՅԱՆ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎՈՄ

Բանալի բառեր՝ *Լեռնային Ղարաբաղ, Բուդապեշտ, ԵՎՎ, կոնֆլիկտ, մանդատ, արտաքին քաղաքականություն*

Հայաստանի ներքաղաքական զարգացումներում դարաբաղյան հիմնախնդիրը և դրա կարգավորման ուղիների որոնումները եղել և շարունակում են մնալ կարևոր ու ազդեցիկ քաղաքական գործոն: Զառօրյա պատերազմից հետո կրկին դիվանագիտական հարթակում ակտիվորեն քննարկվում է դարաբաղյան հարցը և շարունակվում է բանակցային գործընթացը: Ամփոփելով զեկույցը, հանգում ենք այն եզրակացության, որ մեր դիվանագիտությունը պետք է անի առավելագույնը Լեռնային Ղարաբաղին՝ որպես լիիրավ և իրավահավասար կողմ կրկին բանակցությունների սեղանի շուրջ վերադարձնելը: Ղարաբաղը պետք է ակտիվորեն ներգրավվի բանակցային գործընթացին, այնպես ինչպես մինչև 1998 թվականն էր:

Мариам Цатрян

**ВОПРОС НАГОРНОГО КАРАБАХА В БУДАПЕШТСКОМ
САММИТЕ ОБСЕ**

Ключевые слова: *Нагорный Карабах, Будапешт, ОБСЕ, конфликт, мандат, внешняя политика*

Во внутре-политических событиях Армении, карабахский конфликт и его урегулирование было и продолжает оставаться одним из важных и влиятельных политических вопросов. После четырёхдневной войны на дипломатической арене активно обсуждается нагорно-карабахский вопрос, и процесс переговоров продолжается и сейчас. Завершая отчёт, мы приходим к выводу, что наша дипломатия должна сделать максимум, чтоб Карабах остался в качестве полноправного участника и вернулся за стол переговоров. Карабах должен быть вовлечён в процесс переговоров, как это было до 1998 года.

Mariam Tsatryan

**NAGORNO KARABAKH CONFLICT AT THE OSCE SUMMIT IN
BUDAPEST**

Key words: *Nagorno Karabakh, Budapest, OSCE, conflict, mandate, foreign policy*

In Armenia's internal political process Nagorno Karabakh conflict and the ways of its resolution have always been an important and influential political factor. After the four-day war Nagorno Karabakh conflict is being actively discussed in the diplomatic arena and the negotiation process is going on. Summing up, we come to the conclusion, that our diplomacy should do its best to return the NKR to the negotiation table as an equal party to the negotiation process, and to transform the basic principles of the settlement as it was before 1998.